Մատակարար	«Էմպատիա» ՍՊԸ	
Իրավ. հասցե	Ք, Ստեփանակերտ, փ, Կամո II նրբ, 3/44	Հաշիվ N 012
Գործ. հասցե	Ք, Ստեփանակերտ, փ, Հեքիմյան 7ա	
Հ/Հ	11500-420342403	օր "12" հունիսի 2019թ.
Բանկ	Հայբիզնեսբանկ ՓԲԸ	
ՀՎՀՀ	90037236	
Վճարող	ՀՀ քննչական կոմիտե	Պայմանագիր/պատվեր
Հասցե	ՀՀ,ք.Երևան,Մամիկոնյան 46/5	N
Հ/Հ	90001-1000834	
Բանկ	Երևանի թիվ 1 ՏԳԲ	օր
ՀՎՀՀ	02631263	

Լրացում՝ Փոխանցումով

NN	Անվանումը	Քանակը	Միավ.	Գինը	Գումարը
1	Մատուցված փորձաքննության դիմաց ՀՀ ՔԿ ԶՔԳԿ երրորդ կայազորային քննչական բաժնում քննվող թիվ 90867518 քրեական գործով	1		15,166.67	15,166.67

Ընդամենը՝	15,166.67
20.00% ԱԱՀ՝	3,033.33
Վճարման գումարը՝	18,200.00

Գումարը բառերով՝ *Տասնութ հազար երկու հարյուր ՀՀ դրամ*

Կ. Տ.	Կ. Տ.
«Էմպատիա» ՍՊԸ	ՀՀ քննչական կոմիտե
Տնօրեն Ա, Լալայան	Տնօրեն
Գլխավոր հաշվապահ Ն.Բարսեղյան	Գլխավոր հաշվապահ

Որոշում
Փորձագետ ճանաչելու մասին

<<16>> մայիսի 2019թ. ք.Մարտակերտ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երրորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Ա.Ա.Խաչատրյանս, ուսումնասիրելով թիվ 90867518 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՊԲ 33651 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հակատանկային դասակի հրամանատար, լեյտենանտ Արտակ Մամրեի Ալավերդյանը հանդիսանալով պետ, 2018 թվականի հոկտեմբերի 19-ից նշանակվելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի 1-ին վաշտի հրամանատարական դիտակետում՝ որպես հենակետի ավագ, մարտական հերթապահության ընթացքում իր կողմից տհաճ կատակներ անելու և այդ կապակցությամբ նույն դիրքում հերթապահության ընդգրկված նույն դասակի 2-րդ հաշվարկի հրամանատար, ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանից դիտողության արժանանալու պատճառով, խախտել է <<ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագիրքը>> հաստատելու մասին 21.03.2012թ. ՀՕ-91-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 6-րդ կետի՝ զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու լինելու, ենթակաների պատիվն ու արժանապատվությունը հարգելու, նրանց հետապնդումներն անձնական բնույթի շարժառիթներով բացառելու պահանջները, ինչպես նաև ՀՀ ՊՆ 12.05.2017թ. թիվ 080 հրամանի 4-րդ գլխի 20-րդ կետի 7-րդ ենթակետի՝ դիտորդների հերթափոխի գրաֆիկը կազմելու և դրա ճիշտ կատարումը վերահսկելու պահանջը, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, հակառակ ծառայության շահերի չարաշահել է իր պաշտոնեական դիրքը, այն է՝ շեղվելով դիրքի մարտական հերթապահության կրման գրաֆիկից 2018 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 12:45-ի սահմաններում Գ.Հ.Ղազարյանին կարգադրել է կապավորի պարտականությունները կատարելու փոխարեն ստանձնել արթուն դիտորդի պարտականությունները, որից հետո Գ.Հ.Ղազարյանն իր կամքին հակառակ արթուն դիտորդի համար նախատեսված դիտակետում ստանձնել է նշված պարտականությունների կատարումը, որն էլ էական վնաս է պատճառել զինվորական ղեկավարման մարմինների գործունեության բնականոն ընթացքին և զինվորական պետերի և պաշտոնատար անձանց կողմից ծառայողական գործառույթների իրականացման հաստատված կարգին, սասանել պետական իշխանության մարմինների հեղինակությունը, ոտնահարել Գ.Հ.Ղազարյանի իրավունքները:

Բացի այդ, ՊԲ 33651 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հակատանկային դասակի 2-րդ հաշվարկի հրամանատար, ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանը, 2018 թվականի հոկտեմբերի 19-ից նշանակվելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի 1-ին վաշտի հրամանատարական դիտակետում, 2018 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 13:00-14:00-ի սահմաններում նույն դիրքի արթուն դիտորդի համար նախատեսված դիտակետում կատարել է անդամախեղում՝ իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի ԿՋ2309 համարի ինքնաձիգից դիտավորությամբ կրակոց է արձակել ձախ ոտնաթաթի շրջանում՝ ինքն իր առողջությանը պատճառելով հրազենային վիրավորման ձևով մարմնական վնասվածք և տեղափոխվել Մարտակերտի զինվորական հոսպիտալ, որը հանգեցրել է զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Բացի այդ, ՊԲ 33651 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հակատանկային

հենակետի ավագ, զինվորական ծառայության պարտականությունների կատարման հետ կապված՝ նույն դասակի 2-րդ հաշվարկի հրամանատար, ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 13:00-14:00-ի սահմաններում արթուն դիտորդի պարտականությունների կատարման ընթացքում իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի ԿԶ2309 համարի ինքնաձիգից ձախ ոտնաթաթի շրջանում կրակոց արձակելու եղանակով անդամախեղում կատարելու պատճառով, խախտելով ՀՀ ՔՈՒ ներքին ծառայության կանոնագրքի 13-րդ, 16-րդ, 65-րդ և ՀՀ ՔՈՒ կարգապահական կանոնագրքի 3-րդ, 4-րդ հոդվածների պահանջները՝ կապված զինվորական հարգանքի, վարքի, կարգուկանոնի և կարգապահության հետ, 29▯10▯2018թ▯ ժամը 13:30-ի սահմաններում նույն դիրքի կացարանի հարակից տարածքում ծեծի է ենթարկել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող կրտսեր սերժանտ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանին՝ մի քանի անգամ ձեռքով հարվածել է նրա դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Բացի այդ, ՊԲ 33651 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի հակատանկային դասակի հրամանատար, լեյտենանտ Արտակ Մամրեի Ալավերդյանը հանդիսանալով պետ, 2018 թվականի հոկտեմբերի 19-ից նշանակվելով մարտական հերթապահության զորամասի պահպանության տեղամասի 1-ին վաշտի հրամանատարական դիտակետում՝ որպես հենակետի ավագ, նույն դիրքում մարտական հերթապահության ընդգրկված նույն դասակի 2-րդ հաշվարկի հրամանատար, ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 13:00-14:00-ի սահմաններում արթուն դիտորդի պարտականությունների կատարման ընթացքում իրեն ամրակցված ԱԿՄ տեսակի ԿԶ2309 համարի ինքնաձիգից ձախ ոտնաթաթի շրջանում մենահատ կրակոց արձակելուց հետո, անձնական շահերից ելնելով, անցնելով պաշտոնեական լիազորությունների սահմանները, խախտել է ՀՀ ՊՆ 2015թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1525 հրամանի 1-ին մասի 6-րդ կետի պահանջները՝ կապված հանցագործության դեպքի վայրի, հանցագործության գործիքների և այլ իրեղեն ապացույցների՝ մինչև իրավապահ մարմինների աշխատակիցների ներկայանալը պատշաճ պահպանման ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու պարտականության հետ, այն է՝ նույն դիրքում հերթապահության ընդգրկված անձնակազմին հանձնարարել է մաքրել առերևույթ հանցագործության կատարման գործիք հանդիսացած ինքնաձիգը, լրացնել պահեստատուփի պակասող փամփուշտները, տարածքից հեռացնել կրակված պարկուճը, ինչպես նաև զենքի լիցքաթափման ժամանակ փամփշտանոցից դուրս եկած փամփուշտը, մաքրել դեպքի վայրի արյունը, նետել վնասված ոտքի գուլպան, փորձել է այրել վնասված ոտքի ճտքակոշիկը, թաքցնել դեպքը և չզեկուցել այդ մասին վերադաս հրամանատարությանը, որի հետևանքով խաթարվել է իրավապահ մարմինների կողմից հանցագործության դեպքի իրական հանգամանքները ժամանակին և ողջ ծավալով բացահայտելու և մեղավոր անձանց շրջանակը պարզելու ուղղությամբ քրեադատավարական գործառույթների իրականացումը, որն էլ առաջացրել է էական վնաս:

Փաստի առթիվ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ երրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, 363-րդ հոդվածի 1-ին մասով, 358.1 հոդվածի 2-րդ մասով և 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 90867518 քրեական գործը:

2018 թվականի հոկտեմբերի 30-ին Արտակ Մամրեի Ալավերդյանը Ձերբակալվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով, 358.1 հոդվածի 2-րդ մասով և 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման կասկածանքով:

2018 թվականի նոյեմբերի 2-ին Ա.Ալավերդյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ

2018 թվականի նոյեմբերի 2-ին Գեղամ Հովհաննեսի Ղազարյանին սեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով և որպես խափանման միջոց է կիրառվել չհեռանալու մասին ստորագրություն:

Քրեական գործի նախաքննության լրիվությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել մեղադրյալ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանի նկատմամբ նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն:

Վերը նշված փորձաքննությունները կատարելու նպատակով 14.05.2019թ. գրություն է ուղարկվել <<Էմպատիա>> ՍՊԸ-ին՝ ներկայացնել առավել փորձառու հոգեբան-մասնագետի/ների/ թեկնածություն՝ նրան փորձագետ ճանաչելու և վերը նշված երեք փորձաքննությունները կատարելու համար:

Համաձայն <<Էմպատիա>> ՍՊԸ-ից 15.05.2019թ. ստացված գրության՝ քրեական գործով դատահոգեբանական փորձաքննություն իրականացնելու համար նշանակվել է դատական հոգեբանության բնագավառում վերապատրաստում անցած հոգեբան-հոգեթերապևտ, հ.գ.թ., ՌԴ ԲՏԱ իսկական անդամ՝ ակադեմիկոս, 23 տարի աշխատանքային ստաժով Անահիտ Լևոնի Լալայանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 85-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90863618 քրեական գործով մեղադրյալ Գեղամ Հովհաննեսի Ղազարյանի նկատմամբ ամբուլատոր դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն անցկացնելու համար <<Էմպատիա>> ՍՊԸ-ի տնօրեն՝ դատական հոգեբանության բնագավառում վերապատրաստում անցած հոգեբան-հոգեթերապևտ, հ.գ.թ., ՌԴ ԲՏԱ իսկական անդամ՝ ակադեմիկոս, 23 տարի աշխատանքային ստաժով Անահիտ Լևոնի Լալայանին ճանաչել փորձագետ:
2. Ա.Լ.Լալայանին ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով սահմանված փորձագետի իրավունքներին ու պարտականություններին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածով սահմանված փորձագետի եզրակացության կազմման պահանջներին և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ ԵՐՐՈՐԴ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Ծանոթացա որոշմանը՝ ----------